



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

8 սեպտեմբերի 2016 թվականի N 930 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 17-Ի N 293-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ Մ Ա Ն է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 17-ի
«Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների
ցանկը հաստատելու մասին» N 293-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ
ԱՌԱՆՁԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ՌՈՏԵՐԳԱՄԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ».

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել Միավորված ազգերի կազմակերպության «Միջազգային առևտրում
առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական

հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիայով կարգավորման ենթակա՝ Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկը՝ համաձայն հավելվածի:».

3) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. սեպտեմբերի 8
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
 ՀՀ կառավարության 2016 թվականի
 սեպտեմբերի 8-ի N 930 - Ն որոշման

«Հավելված
 ՀՀ կառավարության 2005 թվականի
 մարտի 17-ի N 293 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԵՏՏԻՑԻԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՌՈՏԵՐԴԱՄԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԳԵԼՎԱԾ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ

NN ը/կ	Քիմիական նյութի անվանումը	Քիմիական նյութերի վերաբերյալ վերլուծական տեսությունների մշակման ծառայության համապատասխան համարը (ԲՎԾ)	Կատեգորիան
1	2	3	4
1.	2, 4, 5 - T, դրա աղերը և էթերները	93-76-5	պեստիցիդ
2.	Ալաքլոր	15972-60-8	պեստիցիդ
3.	Ալդիկարբ	116-06-3	պեստիցիդ
4.	Ալդրին	309-00-2	պեստիցիդ
5.	Ազինֆոս-մեթիլ	86-50-0	պեստիցիդ
6.	Բինապակրիլ	485-31-4	պեստիցիդ
7.	Կապտաֆոլ	2425-06-1	պեստիցիդ
8.	Քլորդան	57-74-9	պեստիցիդ
9.	Քլորդիմեֆոբոմ	6164-98-3	պեստիցիդ
10.	Քլորբենզիլատ	510-15-6	պեստիցիդ
11.	1-1-1 եռքլոր-2,2-բիս (ո-քլորֆենիլ) էթան (ԴԴՏ)	50-29-3	պեստիցիդ
12.	Դիլդրին	60-57-1	պեստիցիդ
13.	Դինիտրո-օրթո-կրեզոլ	534-52-1	պեստիցիդ

1	2	3	4
	(ԳՆՕԿ) և դրա աղերը (ինչպիսիք են ամունիումի, կալիումի և նատրիումի աղերը)	2980-64-5 5787-96-2 2312-76-7	
14.	Դինոսեր, դրա աղերը և եթերները	88-85-7	պեստիցիդ
15.	1, 2 - դիբրոմէթան (ԴԲԷ)	106-93-4	պեստիցիդ
16.	Էնդոսուլֆան	115-29-7	պեստիցիդ
17.	Էթիլենդիբրիդ	107-06-2	պեստիցիդ
18.	Էթիլենօքսիդ	75-21-8	պեստիցիդ
19.	Ֆտորացետամիդ	640-19-7	պեստիցիդ
20.	Հեքսաքլորցիկլոհեքսան (իզոմերների խառնուրդ)	608-73-1	պեստիցիդ
21.	Հեպտաքլոր	76-44-8	պեստիցիդ
22.	Հեքսաքլորբենզոլ	118-74-1	պեստիցիդ
23.	Լինդան	58-89-9	պեստիցիդ
24.	Սնդիկի միացություններ, այդ թվում՝ սնդիկի անօրգանական միացություններ, ալկիլսնդիկի միացություններ, ինչպես նաև ալկիլօքսիալկիլ և արիլիրաց- ված սնդիկի միացություններ		պեստիցիդ
25.	Մոնոկրոտոֆոս	6923-22-4	պեստիցիդ
26.	Պարատիոն	56-38-2	պեստիցիդ
27.	Պենտաքլորֆենոլ, դրա աղերը և եթերները	87-86-5	պեստիցիդ
28.	Տոքսաֆեն	8001-35-2	պեստիցիդ
29.	Եռբուտիլանագի բոլոր միա- ցությունները, ներառյալ՝ - եռբուտիլանագի օքսիդ - եռբուտիլանագի ֆտորիդ - եռբուտիլանագի մետակրիլատ - եռբուտիլանագի բենզոատ - եռբուտիլանագի քլորիդ	56-35-9 1983-10-4 2155-70-6 4342-36-3 1461-22-9	պեստիցիդ

1	2	3	4
	- եորուտիլանագի լինօլեսատ	24124-25-2	
	- եորուտիլանագի նավթենատ	85409-17-2	
30.	Փոշիացվող խառնուրդներ, որոնք պարունակում են բենոմիլ (կոնցենտրացիան՝ ≥ 7 տոկոս), կարբոֆուրան (կոնցենտրացիան՝ ≥ 10 տոկոս) և թիրամ (կոնցենտրացիան՝ ≥ 15 տոկոս)	17804-35-2 1563-66-2 137-26-8	խիստ վտանգավոր պեստիցիդային խառնուրդ
31.	Մետամիդոֆոս	10265-92-6	պեստիցիդ
32.	Ֆոսֆամիդոն (լուծվող հեղուկ խառնուրդներ՝ ակտիվ բաղադրամասի 1000 գ/լ գերազանցող պարունակությամբ)	13171-21-6 (խառնուրդ, E,Z իզոմերներ) 23783-98-4 (Z- իզոմեր) 297-99-4 (E- իզոմեր)	խիստ վտանգավոր պեստիցիդային խառնուրդ
33.	Մեթիլպարատիոն (էնուլսիա գոյացնող խտանյութեր՝ ակտիվ բաղադրամասի 19,5 կամ ավելի տոկոսային պարունակությամբ և փոշի խառնուրդներ՝ ակտիվ բաղադրամասի 1,5 կամ ավելի տոկոսային պարունակությամբ)	298-00-0	խիստ վտանգավոր պեստիցիդային խառնուրդ
34.	Ասրեստի տեսակներ՝ ակտինոլիտ	77536-66-4	արդյունաբերական քիմիական նյութ
35.	անտոֆիլիտ	77536-67-5	արդյունաբերական քիմիական նյութ
36.	ամոզիտ	12172-73-5	արդյունաբերական քիմիական նյութ
37.	կրոցիդոլիտ	12001-28-4	արդյունաբերական քիմիական նյութ
38.	տրենոլիտ	77536-68-6	արդյունաբերական քիմիական նյութ
39.	Պոլիբրոմացված դիֆենիլներ (ՊԲԴ)	36355-01-8 (հեքսա-) 27858-07-7 (օկտա-) 13654-09-6 (դեկա-)	արդյունաբերական քիմիական նյութ
40.	Պոլիքլորացված դիֆենիլներ	1336-36-3	արդյունաբերական

1	2	3	4
	(ՊԲԴ)		քիմիական նյութ
41.	Պոլիբլորացված տերֆենիլներ (ՊԲՏ)	61788-33-8	արդյունաբերական քիմիական նյութ
42.	Քառաէթիլկապար	78-00-2	արդյունաբերական քիմիական նյութ
43.	Քառամնէթիլկապար	75-74-1	արդյունաբերական քիմիական նյութ
44.	Տրիս (2, 3 - դիբրոմպրոպիլ) ֆոսֆատ	126-72-7	արդյունաբերական քիմիական նյութ

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ